Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2024թ. նոյեմբերի 27-ի նիստում
Արձանագրություն №01-11/24:
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար
Մ.Գ.Բարսեղյան

ԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) կողմից գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար դրամաշնորհների տրամադրման մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) նպատակը, ոլորտային ուղղությունները, մրցույթիներկայացվող փաստաթղթերը և մասնակիցներին ներկայացվող պահանջները, հայտերի ներկայացման, գնահատման և մրցույթում հաղթողներին որոշելու ընթացակարգերը և սկզբունքները:

2. Դրամաշնորհները տրամադրվում են գիտահետազոտական աշխատանքների խրախուսման, հետազոտությունների արդյունքները մասնագիտական կրթական ծրագրերում ներդնելու, ինչպես նաև դրանց իրականացմանը ուսանողների մասնակցությունն ապահովելու նպատակով:

3. Մրցույթին կարող են մասնակցել համալսարանի հիմնական աշխատող և գիտական կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները և գիտաշխատողները՝ ուսանողների ներգրավմամբ:

4. Մրցույթի կազմակերպումը, հայտերի քննարկումը և մրցույթի արդյունքների ամփոփումն իրականացվում են համալսարանի ռեկտորի հրամանով կազմավորված, 11 անդամից բաղկացած հանձնախումբը (այսուհետ՝ հանձնախումբ)՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ:

5. Դրամաշնորհների համար նախատեսված միջոցները և դրամաշնորհների քանակը սահմանվում են համալասրանի տարեկան բյուջեով:

II.ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԸ

6. Մրցույթին կարող են ներկայացվել հայտեր հետևյալ ոլորտներից՝

1) տեխնիկական գիտություններ՝

- շինարարական նյութեր և պատրաստվածքներ,
- հիմքեր և հիմնատակեր, ստորգետնյա կառուցվածքներ,
- շինարարական կոնստրուկցիաներ և երկրաշարժադիմացկուն շինարարություն,
- շինարարական արտադրության տեխնոլոգիա և կազմակերպում,
- շինարարական մեխանիկա,
- հիդրոտեխնիկա և հիդրոէներգետիկա,
- հիդրավլիկա և ինժեներական հիդրոլոգիա,
- տրանսպորտային ենթակառուցվածքներ (ճանապարհներ, կամուրջներ),
- ներքին և արտաքին ինժեներական սարքավորումներ ու ցանցեր (ջրամատակարարում և ջրահեռացում, ջերմազազամատակարարում, էլեկտրամատակարարում, օդափոխություն և օդորակում),
- շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպում,
- ինժեներական գեոդեզիա,
- մոդելավորումը և տեղեկատվական տեխնոլոգիաները շինարարությունում:

2) Ճարտարապետություն՝

- շենքերի և շինությունների ճարտարապետություն,
- քաղաքաշինություն (տարածական պլանավորում),
- ճարտարապետության տեսություն և պատմություն, ճարտարապետական հուշարձանների վերականգնում,
- մոդելավորումը և տեղեկատվական տեխնոլոգիաները ճարտարապետությունում:

3) դիզայն.

4) տնտեսագիտություն (շինարարության ոլորտ).

5) կառավարում (ճարտարապետության, շինարարության, դիզայնի, զբոսաշրջության ոլորտներ):

7. Մրցույթին կարող են ներկայացվել նաև միջամբիոնային հետազոտությունների հայտեր՝ համապատասխան ամբիոններից մեկական ղեկավարի և առնվազն մեկ ուսանողի ներգրավումով: Նման դեպքերում դրամաշնորհների սահմանված չափի նկատմամբ կիրառվում՝ 1.5 գործակից:

8. Առանձին անվանակարգով դրամաշնորհ կարող է տրամադրվել նաև Երիտասարդ հետազոտողների միավորմանը՝ միջգիտակարգային հետազոտության համար: Սույն կետով նախատեսված դրամաշնորհների դեպքում որպես թեմայի ղեկավար պետք է առաջադրվի մինչև 35 տարեկան գիտաշխատող, ասպիրանտ կամ հայցորդ, որի վրա չեն տարածվում սույն կարգի 10-րդ կետի 6-րդ ենթակետով և 13-րդ կետով սահմանված պահանջները:

II. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը թեմայի ղեկավարի կողմից ներկայացվում են հանձնախմբին՝ մրցույթի հրավերը համալսարանի կայքում հրապարակելուց հետո մեկամսյա ժամկետում

10. Հանձնախմբին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) խմբի ղեկավարի դիմումը (հավելված N 1),

2) հայտը,

3) ծրագրի նախահաշիվը՝ մասնակիցների միջև գումարների բաշխման նշումով,

4) համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի եզրակացությունը՝ թեմայի արդիականության և կիրառական նշանակության վերաբերյալ,

5) մասնակիցների անձնագրերի պատճենները,

6) թեմայի ղեկավարի՝ վերջին 5 տարում հրատարակած գիտական և գիտամեթոդական աշխատանքների ցանկը,

7) ուսանողների ՄՈԳ-երի վերաբերյալ տեղեկանքներ՝ տրված համապատասխան ֆակուլտետի դեկանատի կողմից,

8) տեղեկատվություն հետազոտության արդյունքները մասնագիտական կրթական ծրագրերում ներդնելու հնարավորության վերաբերյալ:

11.հայտ ներկայացնող յուրաքանչյուր խմբում կարող են ընդգրկվել առավելագույնը 4 մասնակից՝ թեմայի ղեկավարը և մինչև երեք ուսանող: Միջամբիոնային հետազոտությունների պարագայում խմբում կարող է ընդգրկվել մինչև 4 ուսանող՝ յուրաքանչյուր ամբիոնից մինչև 2-ական:

12.խմբի ղեկավարը պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

13.խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով ունի գիտական աստիճան և վերջին 5 տարում հրատարակված առնվազն հինգ գիտական հոդված:

14. Խմբերում կարող են ընդգրկվել մագիստրատուրայի և բակալավրիատի չորրորդ կուսի այն ուսանողները, որոնց միջին որակավորման գնահատականը առնվազն 18 է: Առանձին դեպքերում, ֆակուլտետների դեկանների երաշխավորությամբ խմբում կարող են ընդգրկվել նաև բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողներ:

15. Խմբի ղեկավարը և ուսանողները չեն կարող ընդգրկվել մրցույթին ներկայացված մեկից ավելի հայտում:

16. Խմբի ղեկավարի և անդամների աշխատավարձերի տարբերությունը չի կարող գերազանցել 30 տոկոսը:

III. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

17. Մրցութային հանձնախումբը հայտերի ընդունման ժամկետը լրանալուց հետո տասնօրյա ժամկետում՝ ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, կազմում է մրցույթի պայմաններին բավարարող հայտերի ցանկը, գնահատում է հայտերը և կազմում է արձանագրություն մրցույթում հաղթած թեմաների վերաբերյալ:

18. Հայտը չի քննարկվում, եթե՝

1) բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ թեմայի կամ ծրագրի հետ,

2) չի բավարարում մրցույթի պայմաններին:

19. Հաստատված հայտերը հանձնախմբի յուրաքանչյուր անդամի կողմից գնահատվում են մինչև 5 միավոր սանդղակով (հավելված 2)՝ հետևյալ բաղադրիչներով (հավելված 3).

1) թեմայի հիմնավորումը և արդիականությունը,
2) խնդրի արդի վիճակի վերլուծությունը,
3) իրականացման գիտական մեթոդները,
4) թեմայի գիտական նպատակները և խնդիրները,
5) գիտական նորույթը,
6) հետազոտության իրականացման փուլերը (հետազոտության ծրագիրը),
7) ակնկալվող արդյունքները,
8) Նախահաշվի համապատասխանությունը նախատեսվող աշխատանքների ծավալներին (նախահաշվում «աշխատանքի վարձատրություն» տողից բացի կարող են ներառվել «գրասենյակային ծախսեր», «տնտեսական ծախսեր», «գործուղումներ» և «տրանսպորտային ծախսեր» տողերը, որոնց գումարային արժեքը չի կարող գերազանցել դրամաշնորհով նախատեսված գումարի 20 տոկոսը):

20. Հանձնախմբի յուրաքանչյուր անդամի նշանակած առավելագույն գումարային գնահատականը 40 միավոր է:

21. Հանձնախմբի անդամների գնահատականների արդյունքների հիման վրա կազմվում է յուրաքանչյուր հայտի գնահատման ամփոփիչ թերթիկ (հավելված 4):

22 .Հայտի միջին գնահատականը ձևավորվում է՝ բոլոր գնահատականների գումարային արդյունքը բաժանելով հանձնախմբի անդամների (գնահատողների) թվին:

23. Գնահատման ամփոփիչ թերթիկների արդյունքների հիման վրա հանձնախումբը կազմում է հայտերի գնահատման վարկանիշային ամփոփ ցանկը (հավելված 5):

24. Մրցույթում հաղթող են ճանաչվում առավելագույն միավորներ ստացած՝ մրցույթի հրավերով սահմանված քանակի հայտերը, պայմանով, որ յուրաքանչյուր հայտի ամփոփիչ միջին գնահատականը պակաս չլինի 20 միավորից:

25. Վարկանիշային միավորների արդյունքների հիման վրա հանձնախումբը կազմում է արձանագրություն մրցույթում հաղթող ճանաչված հայտերի վերաբերյալ, որը հաստատվում է բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ (հավելված 6):

26. Արձանագրությունը ստորագրում են հանձնախմբի ղեկավարը և բոլոր անդամները:

27. Այն դեպքերում, երբ հանձնախմբի որևէ անդամ համաձայն չէ կայացված որոշման հետ, նրա գրավոր հատուկ կարծիքը՝ հիմնավորումներով, կցվում է արձանագրությանը, այդ մասին հղում կատարելով արձանագրության մեջ:

28. Հանձնախմբի արձանագրությունը՝ հաստատվելուց հետո երկօրյա ժամկետում տրամադրվում է համալսարանի ռեկտորին և ուժի մեջ է մտնում ռեկտորի հրամանով հաստատվելուց հետո:

IV. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

29. Հանձնախմբի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել համալսարանի ռեկտորին՝ հաղթողներին որոշելու մասին արձանագրություն կազմելուց հետո երեք օրվա ընթացքում՝ խմբի ղեկավարի գրավոր դիմումով:

30. Դիմումը ենթակա է քննարկման համալսարանի գիտատեխնիկական խորհրում՝ այն ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում:

31. Գիտատեխնիկական խորհուրդը, քննարկելով հանձնախմբին ներկայացված հայտը (հայտերը), հանձնախմբի ներկայացրած փաստաթղթերը և դրանց հիման վրա կազմված արձանագրությունը, ինչպես նաև բողոքարկման հիմքերը, կայացնում է որոշում դիմումը բավարարելու կամ այն մերժելու վերաբերյալ՝ համապատասխան հիմնավորումներով:

32. Դիմումը բավարարելու դեպքում եռօրյա ժամկետում գումարվում է գիտատեխնիկական խորհրդի և հանձնախմբի համատեղ նիստ, ինչի արդյունքում կայացվում է նոր որոշում՝ մրցույթում հաղթող ճանաչված թեմաների վերաբերյալ:

33. Դիմումը մերժելու դեպքում հանձնախմբի որոշումը մնում է ուժի մեջ:

34. Դիմումի քննարկման և կայացված որոշման մասին այն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում տեղեկացվում են բողոքարկող անձը և համալսարանի ռեկտորը:

V.ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ

35. Հանձնախմբի կամ սույն կարգի 30-րդ կետում նշված որոշումը դրանք կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում հաստատվում է համալսարանի ռեկտորի հրամանով:

36. Ռեկտորի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում համալսարանի ռեկտորի և թեմայի ղեկավարի, ինչպես նաև թեմայի ղեկավարի և խմբի կատարողների միջև միջև կնքվում են գիտահետազոտական աշխատանքների իրականացման մասին աշխատանքային պայմանագրեր, որոնց պատճենները տրամադրվում են համալսարանի գիտության վարչությանը:

37. Պայմանագրերը ուժի մեջ են մտնում կողմերի ստորագրության պահից:

38. Պայմանագրերի գործողության առավելագույն ժամկետը 10 ամիս է:

39. Պայմանագրերում նշվում են դրա կողմերը, պայմանագրի առարկան (թեմայի անվանումը), կատարվող աշխատանքների սեղմ բնութագիրը, պայմանագրի գինը, այն վճարելու ձևերը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պայմանագրի գործողության ժամկետը, այն խախտելու կամ պայմանագրային այլ պարտականությունները չկատարելու հետևանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված այլ պայմաններ:

VI.ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

40. Թեմայի իրականացման ընթացքում խմբի անդամները պետք է ապահովեն Scopus» կամ «Web of science» համակարգերում ընդգրկված պարբերականում հոդվածի հրատարակում (կամ հանձնում հրատարակման), ինչպես նաև թեմայի և (կամ) գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի մշակում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), հետազոտության արդյունքները մասնագիտական կրթական ծրագրերում ներդնելու հնարավորությունը, որոնք հաշվի կառնվեն հանձնախմբի կողմից ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

41. Հրատարակման ներկայացված հոդվածը պետք պարունակի հղում այն մասին, որ հետազոտությունն իրականացվել է համալսարանի ֆինանսական աջակցությամբ՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

42. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն 15 օր առաջ թեմայի ղեկավարը հանձնախմբին է ներկայացնում իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունը՝ մինչև 30 էջ ծավալով:

43. Հաշվետվությանը կարող են կցվել հետազոտությանն անմիջականորեն առնչվող և այն լրացնող հավելվածներ (գրականության ցանկ, ելակետային տվյալներ, փորձարարական աշխատանքների նկարագրեր և արդյունքներ, լուսանկարներ, տեսաֆիլմեր և այլն):

44. Հաշվետվությունն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում հանձնախումբը կայացնում է որոշում՝ հաշվետվությունը հաստատելու կամ հաշվետվությունը լրամշակման ուղարկելու կամ հաշվետվությունը չհաստատելու մասին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով թեմաների ղեկավարներին:

45. Հաշվետվությունը ենթակա է հաստատման, եթե ամբողջությամբ համապատասխանում է մրցույթի պայմաններին:

46. Հաշվետվությունը ուղարկվում է լրամշակման, եթե այն բավարարում է մրցույթի ոչ բոլոր պայմաններին և կարող է առանձին դրույթների լրացման պայմանով կրկին ներկայացվել հաստատման: Նշված դեպքերում թեմայի ղեկավարը՝ հանձնախմբի որոշումը

ստանալուց հետո 10-օրյա ժամկետում լրամշակում է հաշվետվությունը և կրկին ներկայացնում հաստատման:

47. Հաշվետվությունը չի հաստատվում, եթե չի բավարարում մրցույթի պայմաններին:

48. Հաշվետվությունը չհաստատելու կամ լրամշակման ուղարկելու մասին որոշում ընդունելու պարագայում դրան կցվում են համապատասխան հիմնավորումները, ընդ որում, լրամշակման ուղարկելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում դրան կցվում են նաև լրամշակման կամ վերանայման ենթակա դրույթները:

49. Հաշվետվությունը հաստատելու մասին որոշումները 24 ժամվա ընթացքում ներկայացվում են համալսարանի ռեկտորին՝ պայմանագրի վերջնահաշվարկի և այն վճարելու առաջարկությամբ, ինչպես նաև հետազոտության արդյունքները հրապարակելու երաշխավորությամբ:

50. Մրցույթում հաղթած, սակայն մրցույթի պայմանները չբավարարելու պատճառով չհաստատված հաշվետվությունների թեմաների ղեկավարները չեն կարող հայտեր ներկայացնել համալսարանի կողմից հայտարարվող հաջորդ դրամաշնորհային երեք մրցույթներին մասնակցելու համար:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

51. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

52. Սույն կարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի որոշումը ռեկտորի հաստատելուց անմիջապես հետո:

53. Ուժը կորցրած ճանաչել համալսարանի գիտական խորհրդի 2023թ. հունիսի 9-ի №01-06/2023 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար դրամաշնորհների տրամադրման մրցույթի կազմակերպման» կարգը:

Գիտական քարտուղար Լ. Հ. Լևոնյան

27 նոյեմբեր 2024թ.
Արձանագրություն №01-11/24

Հավելված N 1

ՃՇՀԱՀ գիտական հետազոտությունների դրամաշնորհների
տրամադրման մրցութային հանձնախմբին
Նույն համալսարանի ----------ամբիոնի

_____

(անուն, հայրանուն,և ազգանուն, գիտական աստիճան և կոչում)

_____

(հասցե)

_____

(հեռախոս, էլ. հասցե)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել գիտահետազոտական աշխատանքների իրականացման դրամաշնորհի հայտերի մրցույթի մասնակցության հայտը և մրցույթի պայմաններով սահմանված հետևյալ փաստաթղթերը՝

- Ծրագրի նախահաշիվը՝ մասնակիցների միջև գումարների բաշխման նշումով,
- ---------- ֆակուլտետի գիտական խորհրդի եզրակացությունը՝ թեմայի արդիականության և կիրառական նշանակության վերաբերյալ:
- Մասնակիցների անձնագրերի պատճենները,
- Թեմայի ղեկավարի՝ վերջին 5 տարում հրատարակած գիտական և (կամ) գիտամեթոդական աշխատանքների ցանկը
- Ուսանողների ՄՈԳ-երի վերաբերյալ տեղեկանքներ՝ տրված ---------- ֆակուլտետի դեկանատի կողմից:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ մրցույթի հրավերի պայմաններին և վերջիններիս հետ համաձայն եմ:

Թեմայի անվանումը_____

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 202 թ.

Հավելված N 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր՝ հետևյալ սկզբունքով.

Գերազանց: Լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:	5
Շատ լավ: Առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:	4
Լավ: Ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:	3
Միջին: Բավարար չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:	2
Վատ: Ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:	1
Շատ վատ: Բացակայում է կամ չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:	0

Հավելված N 3

Հարցաշար՝ ոլորտային հանձնախմբի անդամի նշանակած գնահատականներով

Ոլորտ_____

(Թեմայի անվանումը)

	Հարցաշարի բաղադրիչներ	Գնահատական
1.	**Թեմայի արդիականությունը:** Որքանո՞վ է հիմնավորված թեմայի արդիականությունը	
2.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
3.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական թեմային:	
4.	**Նպատակ և խնդիրներ.** Որքանո՞վ են հստակ ձևակերպված հետազոտության նպատակը և, լուծվելիք խնդիրները:	
5.	**Նորույթ:** Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական թեման:	
6.	**Ծրագիր:** Որքանո՞վ է ներկայացված ծրագիրը համապատասխանում իրականացման մեթոդներին և /կամ/ որքանո՞վ է այն իրատեսական	
7.	**Արդյունքները:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված հետազոտության արդյունքները (այդ թվում՝ գիտահանրամատչելի) և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորման ծավալներին (արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
8.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ է հիմնավորված նախահաշիվը	

Հանձնախմբի անդամի գնահատականը (8 գնահատականների գումարը, որը չի կարող գերազանցել 40 միավորը)	
Հանձնախմբի անդամի մեկնաբանություն՝ ըստ անհրաժեշտության (հարցաշարի 1-8 կետեր)	

Հանձնախմբի անդամ՝ ----------

(ա.ա.հ. ստորագրություն)

„----„.....202 թ

Հավելված N 4

ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԹԵՐԹԻԿ

Ոլորտ_____

_____

(Թեմայի անվանումը)

	Հանձնախմբի անդամ (ա.ա.հ.)	Գումարային գնահատական	Ստորագրություն
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
	Միջին գնահատական		

„----„.....202 թ

Հավելված N 5

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ

	Թեմայի անվանումը	Ամփոփիչ միավոր	Վարկանիշը /զբաղեցրած տեղը/
1			
2			
3			
4			
5			
6			

Մրցութային հանձնախմբի ղեկավար՝ ----------

Ա.ա.հ., ստորագրություն

Հանձնախմբի անդամներ

1. ----------

Ա.ա.հ., ստորագրություն

2. ----------

Ա.ա.հ., ստորագրություն

3. ----------

Ա.ա.հ., ստորագրություն

4. ----------

Ա.ա.հ., ստորագրություն

5. ----------

Ա.ա.հ., ստորագրություն

,,----,,.....202 թ.

Հավելված N 6

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական հետազոտությունների համար դրամաշնորհների տրամադրման մրցութային հանձնախմբի

1.Հանձնախումբը, հաշվի առնելով մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքները, որոշում է մրցույթում հաղթող ճանաչել ստորև ներկայացվող թեմաները

	Թեմայի անվանումը	Թեմայի ղեկավարը	Ամփոփ. միավոր	Վարկանիշ (զբաղ.տեղ)
1				
2				
3				
4				

Մրցութային հանձնախմբի ղեկավար՝ ----------

(Ա.ա.հ., ստորագրություն)

Հանձնախմբի անդամներ

1. ----------

(Ա.ա.հ., ստորագրություն)

2. ----------

(Ա.ա.հ., ստորագրություն)

3. ----------

(Ա.ա.հ., ստորագրություն)

4. ----------

(Ա.ա.հ., ստորագրություն)

5. ----------

,,----,,.....202 թ.